



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

Աւագին Գիտութեաց


18980


Zusammen

Unvollständig



Բիֆլիս  
1876





1970 3. Եղիշչան

474

# ՀԱՄԱՁՈՅՑ ՍՈՓԵՐԻ Ք

Հայրենաց գործքերի վերաբերյալ

ԱՇԽԱՏԱՆԿԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՎԱՆՑԻ

ՆՈՐԲԱՑԱՋԴՑԻՈՑ

1876

ԹԻՖԼԻԶ

Կ ՏՊՐԱՆԻ ՀԱՄԱՐՄԱՆԱՑ ԲԵԼԱԶԵՐՆԱՑ ԵՒ ԸՆԿ.

ԳՐԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԽԱՂԵՑՄԱՆ ՀԱՅՐԱՎԵՐ

391.99  
Փ - 56

891.99  
գի-56

Վ. ՀԱՄԱԲՈՅ

ՍԱՓԵՐՔ

Հայրենաց գործքերի վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆԿԱՐԱՆ

ԱՄՐԴԻ ՓԻԼՈՒԱՆ հաշվական

ՆՈՐԲԱՑԱԶԴՑՈՒՑ

12003

1876

թիվ 1. 12

Ի ՏԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԿԱՅ.



4492

ԻՆԻ ՀԱՅՐԱԿԱՆ ԲԱՐԵՐՈԴ

Մեծապատիւ Խշան

Պ. ԹՈՎՄԱՍ ԳԵՈՐԳԵԱՆ ՄԱՀՏԵՍԻ

ԲԱԴԻՆԵԱՆՑԻՆ

Дозволено Цензурою Тифлисъ 6 Февраля 1876 г.

ԵՐԱԿԱԳԵՏՍՈՎ,

Առիրում է

5005



ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ազնուափայլ Պարսն Թովմաս Գէորգեան Մահտեսի Բաղիկեանց

ՀԱՅՐԱԿՈՆԱՄ ԲԱՐԵԲԱՐ!

Մանկաթեանո ազատ ժամերից սկսած Զեր մարդուախութեան հովանու տակ, օրէցօր բարեկաւանալով կեանքիս ասպարեզի մէջ՝ մտածում էի միշտ քաղցր երեւակայութիւններով. արդեռք երբ մնձաւատիւ Բարեբարիս ողորմածութեան սերմունքը արդիւնաւոր, արդասիքավ կ'աճեն, կ'զօրանան:

Ահա այսօր, թող զորացած համարվի փոքր իշտա է այդ գործդ մարդասիրութեամն, որ մնձ խնամքով սերմանել էք, այս ամենայետին, նուռաստ, բայց անդամնիկ վատակով — „Ա ո փ ե ր ք“ դրբոյիով:

Ընդունեցէք այս, ով խնամածու Բարեբար, իրրե հարազատ վաստակ, տառապեալ կնօջ այն լումայի պէս, որը Բարեբարներին վարձահատոյցն Յիսուս ընդունեց:

Եւ այն առիթով առաջին ձևոնարկս մեր Հայրենեաց Գործքերի վրա սկսեցի, որ նորա քաղցր համակրութիւնով վառվեմ. Ուրեմն թող ներէ ինձ իմ ազգը այն թերութիւնները, որք կ'երեւան շաբած էջերի մէջ, որին մնում եմ միշտ անձնանուեր մշակ.

## ՀԱՄԱԲՈՏ ՍՈՓԵՐՔ

ՀԱՅՐԵՆԵԱՅ ԳՈՐԾՔԵՐԻ ՎԵՐԱՅ.

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ց

Ի՞նչ տաժանմունքով, ովք բարի Աստուած,

Անցնումեն օրեր, տարիներ, դարեր,

Որքան աղցաւոր ցաւեր են դիպած,

Որք կամին մարդիս միշտ տարութերել:

Պատճառ փառք ու գահ, հարուստ, բաղդաւոր,

Աղքատ ապաբաղդ, ցաւօք սրտակէզ,

Եւ ուրախութիւն զուարթ, փառաւոր,

Ողը ու սուդ, կեանք, մահ խառն են մշտապէս:

Դու միայն Աստուած, Արարիչ անմահ,

Անփոփոխ մնայուն ես յար յաւիտեան,

Դու միայն, ովք Տէր՝ անսահմանամեայ,

Որպէս անսկիզբն՝ նոյնակէս անվախճան:

թէ երկնք գոռով կայծակ է ցայտում,  
Անձրեք հորդահոս հեղեղ արձակում,  
Թէ սառնութիւն, ցուրտ, բուք մարդիկ Են խեղում  
Նւ թշնամիք անսանձ իրար կոտորում,  
Բայց դու նոյն հաստատ բնութեամբ միահերպ  
Միակերպ աչքով նայում ես բարձրից,  
Խնչպէս հարազատ հովիւն իւր հօտին  
Նայումէ անթարթ աչքով զթալից:  
Տնօրինում ես դու կարդում ու կշռում,  
Չափում կեանք կամ մահ մարդին փոփոխուն,  
Թէ խառնութիւնոր արարածք համայն  
Անցնում են, սակայն նորէն ես լինում:  
Խնչպէս դու բարի, ովք խնամակալ  
Նոյնպէս և բարի՝ մարդուն ստեղծիր,  
Խնչպէս դու անմահ, ովք բարի Աստուած  
Նոյնպէս և մարդուն բարի կեանք տուիր:  
Բայց շուտով հասաւ բնաբոյս նախանձ  
Հոգի չարութեան, հիւտատելութեան,  
Որով մարդն եղեւ ամենի անսանձ,  
Թափեց իւր վերայ վճիռդ բարկութեան  
Նորա զուտ հոգու անարատ աղըիւր  
Պղտորմիցաւ իւր զեղիս մոլորութեամբ,  
Մեռնելու անդարձ վճիռ ստացաւ  
Իւր անհնազանդ բնաւորութեամբ:  
Նւ այնուհետեւ մարդիկ բաղմացան  
Հոգւով նախանձու, կրքով չարութեան,

Եւ ձանաչեցին պատուհաս մահուան  
Մեծ ձնակատաղիր և պարտք սեպհական:  
Շատացան ազդեր, աշխարհ բռնեցին.  
Անառակ և բիրտ օրեր անցուցին  
Մինչ պատուհասառաք երկրորդ բարկութիւն  
Գեղանից ստացան որ ջրասոյզ լինին:  
Նորէն նորոգվեց աշխարհ ամենայն  
Հոգւով քու բարի մարդասիրութեան,  
Թագաւոր, իշխան և կալուածատէր  
Կարդվեցան պահել վարչութիւն մարդկան:  
Ազգ ազգի վերայ, իշխան իշխանի  
Կորիւ, պատերազմ, արիւնհեղութիւն  
Հնարեցին, գուցէ մէկը միայն տիրի,  
Իսկ մնացեալը լինին ցած ծառայ նկուն:  
Ազգաց մէջ միայն չէ նախանձութիւն,  
Ազգերն ազգերին միայն չեն կոտորում,  
Այլ և բարեկամք, ծանօթ ազգականք,  
Հարազատ ժառանգք իրար են ուտում:  
Ի՞նչ եմ ասում, ո՞չ զգուանիք, բացի այդ  
Միակ մարդու մէջ կայ ևս մի ախտ,  
Որ երբ չ'գտնի դրսի թշնամի,  
Նա իւր անձի հետ կովիլ կ'յանդգնի:  
Այսպէս ահա այս աշխարհն ու մարդիկ  
Կեանքով վրդոված մնում անխաղաղ,  
Կենցաղ երջանիկ, հոդի խաղսողիկ  
Կորան ու շիջաւ լըսն անշամանդաղ.....

## Ե Խ Ո Ն Վ Ե Ր Չ Ի Ն

Կ Ի Լ Ի Կ Ե Ա Ց Ի Հ Ա Ց Ո Յ Թ Ա Գ Ա Ւ Ո Ր .

**Մ**եռել էր արդէն կոստանդին չորրորդ, թագաւոր Հայոց Կիլեկիոյ երկրի, Հայեր ու Լատինք բոլոր ժողովուրդ Մնացին անզուխ իրար թշնամի: Լատինք, որ մի անդամ Հայոց թագ ու դահ Ափի մէջ առած՝ մեզ տիրում էին, Զէին ուղում, որ կրկին մի Հայկազն Վիսի թագաւոր Կիլեկիոյ երկրին: Բայց որովհետեւ Հայ իշխաններն էլ Ռւզում էին որ Հայկազն լինի, Այդպէս այդ միջոց տարաբայութեան Շարունակվեցաւ մինչ երկու տարի: Եւ անմիաբան ազգեր միմեանց դէմ Հակառակաբար բաց արին մեծ վէճ, Մինչ քաղաքական թշուառութիւնից Անկան հոգեւոր թշուառութեանց մէջ: Կրօն ու ծէսէր սրայքար գուրս եկան, Դաւանութիւններ իրարու դիպան, Մինչ երկու ազգաց միաբանութիւնք, Որ միմեանց հետ էր՝ իսպառ վերջացան: Դահն Հռովմայ վաղուց հսկում էր,

Որ Լատինք, Հայեր չ'միաբանվին, այսուայ կուրու Մինչ անձարացած Հռովմայ Փափի Կորդաց աշխը Միջնորդութեանը ինքեանք կարօտին: Եւ այսպէս Հռովմայ Հոգեւոր Պետր Երրեւ բարեկամ Հայր Հասարակաց Եւ իբրև միջնորդ ու Խաղաղաբար — Այս առաջարկեց Հայոց, Լատինաց Որ Կիլեկիայի Հայոց թագաւոր Թիսի ընարժի ԵԽՈՆ Լուսինեան Ի ցեղէն նախկին թագաւորների Վիպրոսի արքայի Խոհեմ ազգական: Եւ այս միջնորդի առաջարկութեան Թէ Լատինք, թէ Հայք շուտ յօժարեցան, Փառաւոր հանդէս, մեծ տօն կասարվեց — Լւսն վեցերորդ թագաւոր օծվեց: Թէ Լատինք, թէ Հայք միամնեցան, Երբ Հռովմայ Փափից թագաւոր ստացան, Թէւ չկարացին լինել միաբան: Ու մնացին այնպէս կռվեց անբաժան:

## Ա Ն Ո Ւ Ր Չ Զ

**Գ**եռ վեց ժամ չ'անցած՝ Երբ Լւսնն օծվեց Յերեկուայ ծրագր արփին գերտկայ

Նողալով կապոյտ կամարի միջեց՝  
Անցաւ շաւիղով իւր ստորերկեայ:  
Թողեց իւր շըջանն հարսնակերպ լուսնին,  
Որ էր գիւելուայ անքուն թագուհին,  
Որի դէմք շողշող, արծաթաջրած  
Սպիտակ անօսր ամպով սքողած:  
Ցոլում էր այդպէս ամպերի միջով  
Իւր շողքը ձգած պալատի վերայ,  
Ուր ննջում էր մի՛ խառ. խուռ երազով  
Նորաօծ շքով արքայն միօրեայ:  
Զանազանակերպ տեսիլք, տեսարան  
Բացվում էր շուտ շուտ արքայի առջև,  
Վրէժ, պատերազմ, կռուի ախոյեան  
Յաղթել ու յաղթվին ազգաց յարատե:  
Շուռ տուեց աչքերն ոստիւն մի ձայնից—  
Յանկարծ նա տեսաւ սիրուն մի աղջեկ,  
Որ իջաւ նրա մօտ երկնքի բարձրից  
Քայլեց մի քանիս ինչպէս կաքաւիկ:  
Նա չէր հողածին կամ մահկանացու,  
Այլ զուարթուն հոգի կամ հրեշտակ անմահ,  
Սև երկար գիսակ, ճակատ փայլածու  
Եւ բարակ—երկար հասակն անխնայ:  
Երկու աչք ունէր մին մինից հսկայ  
Թուխ թուխ յօնքերով կամարի տուած:  
Եւ անմեղ ժպիտն շըթունքի վերայ  
Համեստ փայլում էր գերբուն նկարուած:

Նուրբ ականջներից ալմասի օղեր  
Կախարած շքել, զանազանակնեայ,  
Փաղիաղում էին օղ, մատանիներ  
Փափուկ ու բարակ մատների վերայ:  
Մատղաշ էր հասակն և մէջքը բարակ,  
Գլոխն վեհ պասկ անմահից փառքով,  
Հագուստը փայլուն—բոլորն սպիտակ  
Օղի մէջ փրփրում մեղմիկ զեփիւռով:  
Դարձաւ, մօտ եկաւ ծիծաղիոտ դէմքով  
Նորապսակ արքային ողջունեց սիրով:  
— Ենորհաւորումեմ, ասաց քու փառքիդ  
Պասկ Ճոխութեան, և պերճանք Բագիդ:  
Գուցէ կամենաս, որ ինձ ճամնաշես  
Թէ ով եմ, ի՞նչ մարդ հրեշտակապէս,  
Հոգին եմ, Հոգին ես Հայաստանի,  
Ծաղկեալ ծաղկին եմ Հայ բուրաստանի:  
Ծնունդ եմ առել ջրհեղեղեց յետ  
Այն ՀԱՅԿ անդրանիկ Նահապետի հետ,  
Որն առաջ եկաւ Յարեմի ցեղէն,  
Քաջ, անպարտելի, հսկայ, սղառաղեն:  
Նա ճանաչում էր Ճշմարիտ Աստուած,  
Չ'ուզեց խոնարհիլ Քուշայ Ներովթին,  
Ուստի միաբան երեք հարիւրով  
Դէմ կեցաւ նորա անթիւ զօրքերին:  
Արբ նետն արձակեց Ներովթի սրտին  
Արկիր կործանվեց նրա հպարտ մարմին,

Անթիւ, անհամար զօրքերն էլ փախան—  
ոմանք էլ Հայելին անձնատուր եղանք:

### ՅԱՑԿԱԶՈՒՆՔ

**Ե**ւ քաջ, արին Հայկ Տովիզերքում վանայ  
նահապետ դարձաւ ամենի վերոյ, առ անձաւ  
եւ իւր անունով այսպէս կոչվեցան—  
Բնակիչներն ՀԱՅՔ, երկիրն ՀԱՅՈՍՏԱՆ:  
Հայկէն յետ Հայոց նահապետ նստաւ առջան հայր  
նորա անդրանիկ որդին Արմենակ,  
Որը Սօսեաց մեծ անտառը տնկեց  
Եմնեց նոյնակէս և զանազան քաղաքք:  
Եւ նորա աթոռ նահապետութեան  
Շուտ ժառանգեց իւր Արմայիս որդին.  
Սա էլ շննեց այն Արմաւիր քաղաք,  
Որ նահապետներն միշտ այնակը նոտինն առան այլ  
Սորանից յետ իւր ժառանգն Ամասիայ  
Նստաւ նահապետ Հայերի վերայ,  
Որի անունով Արտրատ սարը  
ԱՄԱՍԻԱ է կոչվում մինչև այս դարը:  
Ամասիաից յետ իւր որդի գեղամ  
Ժառանգեց նստաւ աթոռ Հայրական,  
Մնաց յիշատակ և սորա օրօվ

Այն գեղարքունի և գեղամայ ծով: Առ անքան  
Գեղամից յետոյ իւր Հարմայ որդին պատճեան ըստ  
Եղեւ նահապետ խղճուկ Հայելին,  
Որ էր թոյլ, երկոտ, տկարասրափիկ,  
Որից չեն վախում օտար թշնամիք:  
Եւ Մարք ու գամերբ, Միջադետացիք  
Իմ Հայաստանին ոտնակոխ արին,  
Հայերին անթիւ նեղութիւն տուին,  
Հարկատւութեան ներքե ձգեցին:  
Մինչ նորա որդի ԱՐԱՄ քաջառոյդ պարագան ըստ  
Երբեւ մի ձրագ ծագուեց անկիւնից,  
Ճողովեց շուտով յիսուն հաղար զօրք  
Առնել իւր վրէժ զոռ թշնամիքից:  
Առաջնն ելաւ Մար—Նիւքարի գէմ,  
Բռնեց, կենդանւոյն Ճակատից վարսեց,  
Երկրորդ անգամին պատերազմ բացեց  
Քարշամին սպանեց, զօրքերին ցրվեց:  
Երրորդ Պայ-Արիս Քաղեայ սոնունով  
Եգիպտացւոյ մի գաղթականներից,  
Սորան էլ նեղեց, մինչ Հարկադրուած  
Փախստ. իւր զօրքով Արամի ձեռքից:  
Արամի որդի գեղեցիին Արայ  
Արամից յետոյ Նահապետ նստաւ,  
Ասորւոց վավաշ Շամիրամի գէմ  
Աղջախոհութեան անմեղ զոհ դարձաւ:  
Համիրամ թագուհու օգնականութեամբ

Նահապետ եղել Կարդոսն Արայիւան,  
Բայց Շամիրամին օգնութիւն գնաց  
Եւ պատերազմում միասին մեռան։  
Հայաստանը գրկուեց իւր նահապետից  
Ընկաւ Ասորւոց Նինուասայ ձեռքում,  
Ամուխին ժառանդ մնաց Անուշաւան  
Որին գերեցին մանուկ հասակում։  
Մինչև աղասվեց իւր գերութիւնից  
Դարձաւ Հայաստան, նահապետ նստաւ.  
Բայց դիբաղդաբար անժառանդ մեռաւ,  
Նրա ժառանդութիւնն ուրիշ ցեղ անցաւ։  
Մի քանի զօրեղ մարդիկ դուրս եկան,  
Որը մէկ մէկուց յետ նահապետ նստան,  
Մինչ Սկայորդու ժառանդորդ ՊԱՐՈՅՐ  
Եղել առաջին Հայոց թագաւոր։  
Պատճառ, սա Մարաց Կեաքսարին օգնեց  
Որ Սարդանարադ Ասորւոյն յաղթեն,  
Յաղթեցին հեշտիւ, և այս պատճառաւ  
Թագաւորի թագ Կեաքսարից ստացաւ։  
Թագաւորի շուքն հայի մէջ մտաւ,  
Իմ Հայաստանն էլ թագաւոր տեսաւ,  
Պարոյրից յետոյ Հրաշեայ նստաւ,  
Որը Բարելացւոց օգնել կատեցաւ։  
Միասին գնացին մինչ Երուսաղէմ  
Ճնջեցին Յուդայի թագաւորութիւն։  
Հրաշեայից յետ զաւակէ զաւակ

Կալան աթոռի մեծ ժառանգութիւն  
Փառնաւազ, Պաճոյճ, կոռնակ ու Փաւոս,  
Հայկակ Երկրորդ և Երուանդ առաջին  
Եւ Երուանդից յետ թագաւորութիւնը նույնը  
Մնաց մեծ ՏԻԳՐԱՆ առաջներորդին։  
Սա Հայաստանի տարածութիւնը  
Հասցրեց Միջերկրեայ, Պոնասոսի ավին,  
Քաղաքավարի համեստութիւնով  
Եւ առուատուրով գարդայրեց Հային։  
Պարսից Կիւրոսին օգնեց անսովոթաք,  
Որի գեղարդով մեռաւ Աժդահակ։  
Սորանից յետոյ եղել թագաւոր  
Վահագն քաջազն, հակայ, զօրաւոր։  
Այս օա էր, որի առնակատկիրը  
Աստուածացել էր Վիրք ազգի ձեռօք,  
Սորան յաջորդեցին այս թագաւորներ  
Առաւան, Ներսէհ, Զարեհ ու Արմնդ։  
Յետոյ Բայդամ և՝ Բայդամից յետոյ  
Էր թագաւոր Վանն՝ որի անունով  
Շամիրամակիրտ քաղսին Վան կոչուեց,  
Եւ նորա մօտի ծօվս—Վանայ ծով։  
Եւ Վանից յետոյ Վահէն դուրս եկաւ  
Պարսից Դարեհին օգնել կամեցաւ։  
Եւ Աղէքսանդրի Մակեդոնացւոյ  
Պատերազմի մէջ սա սովանվեցաւ։  
Որով վերջացաւ Հայկազանց տանից

Թագաւորութեան շարունակութիւն. յստես մարդ  
Աղեքսանդրից յետ խեղճ Հայաստանը բառութեան  
Ընկաւ Պարթևաց Արշակի ձեռքը: բայց այս ժաման  
Յիշատակ թողուլ և անուն հանել ըլքանառ ոչ  
Պարսից աթոռը Արշակը ընտրեց, որից ճան կամ ի  
իսկ Հայաստանը, որ մնաց անտէր՝ մասնաւուն ոչ  
Այն էլ Վաղարշակ եղօրը յանձնեց:

### Ա Ր Ե Ա Կ Ո Ւ Ն Ի Զ

**Ս**ա Արշակունեաց մեծ Հարստութեան պիտակ  
Սկիզբ դրեց Հայաստանի մէջ  
Եւ աթոռանիստ Մծրինը ընտրեց  
Ուր պէտք է վճռվէր ամեն դաւ ու վէճ:  
Մակեղոնական համախոհները  
Մորփիւլիկէսին օդնել ուղեցին,  
Բայց Հայի ուժեղ, հաստատուն բազկից  
Ցրիւ հայածուած՝ փոյթ նուած վեցին:  
Սակայն Հայերն էլ քաջ գորութեան հետ  
Ունէին կրօն հրապաշտութեան,  
Վաղարշակից յետ Արշակ առաջին  
Ժառանդեց աթոռ թագաւորութեան  
Յետոյ Արտաշէսն այն առաջներորդ  
Պարսից Արշեղից կայ թագ ու դահ,  
Կարգեց թագաւոր Տիգրան, Միհրդատ

Արարատի և Կովկասու վերայ: Եվեց միզարդ գանձ  
Եւ սորա որդի Տիգրան Երկրորդինոց ուն պանա և  
Օգնել կանչեց իւր քեռայր Միհրդատ, Ենազմուանից  
Հռովմայեցւոց դէմ քաջութիւն արինուոն ըլքանառ  
Վերջը մահադեղ խմեց Միհրդատ: արած միզարդ  
Տիգրանից յետոյ Արտաւազդ առաջին պանձ  
Խարմից, Եղիպտոս գերի տարուեցաւ,  
Եւ Կվեպատրայ գոռող թագուհուց ուն մահանաց  
Միամիտ, անմեղ զինահատուեցաւ:  
Սորանից յետոյ Արշամ թագաւոր  
Հարկատու գարձաւ Հռովմայեցւոց,  
Արշամից էլ յետ սուրբ կրօնի ծաղիկ  
Աբգարը նստաւ թագաւոր Հայոց:  
Որի օրօք ծնուեց Բէթղէհեմի մէջ  
Տէր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ աղատիչ մարդկանց  
Եւ Օգոստասի Հռովմայ կայսեր  
Հրամանաւ զրուեց Հարկատու մի անձ:  
Աբգարը Հրէից զօրքը նուածեց  
Եւ Հերովդէսի եղօրն սպանեց,  
Իւր իշխանութեան իրաւունք ու գահ ունեցաւ  
Մծրինէն փոխեց, տարաւ Եղեսեայ:  
Ուզեց Հռովմայ տակէն աղատուիլ  
Բայց չի յաջողվեց, ցաւ—ախտ ստացաւ,  
Նամակ ուղարկեց Յիսուս Քրիստոսին,  
Նորա պատկերով քիչ հանդստացաւ,  
Յետոյ թագէսու Առաքեալն եկաւ

Հիւանդ Արդարին բժշկութիւն տուաւ.  
Աւ ամենի հետ ջրով մլրաեց,  
Քրիստոնէութեան սուրբ հիմքը զրեց:  
Արդարից յետոյ Անան, Սանատրուկ  
Զնջեցին իսպատ Քրիստոնէան սուրբ ուխտ,  
Մինչեւ Սանատրուկ կուրացած սրտով  
Մարախրոս արաւ իւր դուստր Սանդուխտ  
Նրուանդն երկրորդ Սանատրուկի տունն.  
Զնջեց, մատց միայն Արտաշէս երկրորդ,  
Որին Սմբատ դայենակ փախցրուց Պարսկաստան  
Դարեհից բերեց զօրք ու զօրական:  
Արտաշէս սատաւ աթոռ հայրենիք.  
Հարմացրուց իրեն սիրուն Սաթինիկ,  
Մաղկեցրուց ուսումն Հայաստանի մէջ,  
Պարսից դէմ ելաւ, տկարացաւ, մեռաւ:  
Եւ սորա որդի երկրորդն Արտաւազդ  
Մի ամբարտաւան պատանի դարձաւ,  
Բարերարներին եղեւ ապերախտ,  
Մասեաց սարի մօտ խելացնոր կորաւ:  
Սորանից յետոյ Տիրան առաջին  
Եւ Տիգրան եղբորդ զուր պատերազմող:  
Եւ յետոյ Վաղարշ՝ Տիգրանի որդին,  
Եր քաջ թագաւոր՝ քաղաքներ շինող,  
Խոսրովն առաջին՝ զարմեն Արաշակունի  
Ելաւ պատերազմ դէմ Արտաշերի,  
Պատճառ որ Պարսից Պարթև Արտաւան.

Սովանուեց նորա սրով դաւաճան:  
Այս Արտաշերի խորհրդովն Անակ  
Եկաւ սպաննեց միամիտ Խոսրովին,  
Խոսրովի որդի Տրդան Հոռմինմ  
Յաղթեց փայրենի գոթաց Հոչէին:  
Ռորով ստացաւ թագաւորութիւն:  
Հոռմի զօրաց հետ Հայաստան եկաւ, ամէն սկզբան  
Անակի որդի սուրբ Գրիգորին  
Չարշալեց, խորի մէջ ձգել տուաւ:  
Արտաշի որդի Շապուհն ել եկաւ  
Տրդատից յաղթուած փախտ Պարսկաստան,  
Հոխիսիմեանց կուսանիք, անարատ դաւներ  
Տրդատի ձեռքով մարտիրոս դարձան:  
Տրդատ և իշխանք խելացնոր եղան  
Պրիդորին Խորից վերջն հանել տուան,  
Դուրա եկաւ Գրիգոր ամենին մլրաեց,  
Կուսահորիջ աղջի, հաւատի կոչեց:  
Բայց Խոսրով երկրորդ՝ Տրդատի որդին,  
Ափսոս հօր նման չուներ քաջութիւն,  
Տիրան երկրորդին Շապուհն հրաւիրեց  
Եւ Խաբէութեամբ աչքերը հանեց:  
Իսկ Արշակ երկրորդն իրը հարկութրուած  
Անյուշ բերթն ընմինիլ Շապուհի մօտ գնաց  
Նորա տեղ Շապուհ զրից Հայաստան  
Արծրունի աղջին իշխան Մէհրուժան:  
Եւ յետոյ Ներսէս սուրբ Հայրապետը

Յունաց թէովոս կայսրից խնդրվեց, ու այս քառամբը  
Արշակ երկրորդի պատահադ Պատրոգւոյն հայաց ու այս  
Թագաւորելու Հայաստան բերեց:  
Շապուհն էլ զօրբեր դրկեց Հայաստան քրդ միացած  
Որ Մէհրուժանին օգնելու հասնին,  
Բայց Տէրէնտիոսն Յունաց քաջ զօրքով արաւակ առաջ  
Յաղթեց թշնամի Պարսից զօրքերին:  
Եւ Բագրատունի թագաղիր Սմբատ  
Հեգնելով պսակեց զոռ Մէհրուժանին,  
Գլխին դնելով հրաշէկ երկաթ  
Սպանեց, ինքը կեանքն անօրինին:  
Բայց աւաղ անկարդ մեր Պատ թագաւոր մասնաւուն  
Մահաղեղ առեւց սուրբ Հայր Ներսէսին,  
Հալածեց իրնից և Տէրէնտիոսին,  
Ուստի մահ ստացաւ Կայսրից ցաւաղին:  
Յայնժամ Վարազդատ քաջ երիտասարդ այժ այտու  
Կայսրից ուղարկվեց Հայոց թագաւոր,  
Սա էլ Շապուհին ապահնեցաւ  
Եւ վերջը Կայսրից աքսոր տարվեցաւ:  
Արշակ, Վաղարշակ Պապի ժառանգներ՝  
Եղան թագաւոր Կայսեր հրամանաւ,  
Վաղարշակ մեռաւ, մնաց միայն Արշակ,  
Որը Փոքր Հայոց միայն տէր կեցաւ:  
Շապուհ Հայերի կէս բաժնի վերայ  
Խոսրով երրորդին դրեց թագաւոր.  
Խոսրով Շապուհին չմնաց հսկատակ

Աւստի Անյուշ բերդը մտաւ նա աքսոր:  
Եւ սորս եղբայր Վառամշապուհին  
Դրեց թագաւոր Պարսից Արտաշէլի,  
Սորս օքօք Մեսրովով Հայոց զլի համար  
Զանաց, Հնարեց Հայկական տառեր:  
Պարսից Յաղիկերտի այն Շապուհ որդին  
Թագաւորելու եկաւ Հայաստան,  
Ատովմ Մոկացու արհամարհանքով  
Չորսը տարուց յետ դարձաւ Պարսկաստան:  
Կոփիներ բացունց Պարսից, Հայոց մէջ.  
Վերջը միմեանց հետ հաշտութիւն արին  
Եւ Վռամշապուհի որդի Արտաշէրն  
Թագաւոր արած՝ Հայաստան բերին:  
Ափսն Արտաշէր անարժան զործքով  
Գործ զրեց անարդ, վատ բնաւորութիւն,  
Մինչ համբերութիւնն Հայ նախարարաց  
Կտրեցաւ, ծագեց մեծ խոռովութիւն:  
Գնացին Պարսից դուռն ազգասէր իշխանք,  
Խնդրեցին բառնալ Հայոց աթոռից  
Արշակունեաց այդ թագաւորութիւն,  
Որ քիչ վեաններ չ'հասուց Հայերին:  
Այսպէս վերջացաւ Հայոց աթոռից  
Եւ Արշակունեաց թագաւորութիւն,  
Եւ Վռամ երկրորդ՝ Պարսից թագաւորն,  
Հայաստան զրկեց Վէհ-Սիհր-Շապուհն:  
Մեծ խոռովութիւն ծագեց ազդի մէջ,

Համառառ Սովետք Ս. Փ. Ն.

2.



Որը պատճառ դարձաւ ազգի կործանման,  
Արիւնով շինուած սուրբ եկեղեցին  
Քարուքանդ եղաւ, մարդիկ զոհվեցան:

ՄԱՐԶՊԱՆԻ, ԿԵՐՄԱՊԱՂԱՏՔ ԵՒ ՌՍՏԻԿԱՆՔ:

**Պ**արսից թագաւոր երկրորդն Յազիերտ,  
Աշխատեց Հայերն դարցնել իւր կրօնին,  
Վերջը շատ զօրքեր դրվեց Հայաստան,  
Որոց պաշտպան էր չար Վասակ Սիւնին:  
Եւ Հայոց զօրքերն Աւարայր դաշտում  
Հանդիման նոցա խմբովին կեցան.  
Անդ Մամիկոնեան սուրբ և քաջ ՊԱՐԴԱՆ  
Զոհվեց կրօնին և Հայ ազգութեան:  
Հայերն յաղթվեցան, փառաւոր մահսվ  
Շատերն այս դաշտում քաջութեամբ անկան:  
Դաւաճան Վասակ որթնալից մեռաւ,  
Որ իւր ազգութեան մատնիչը եղաւ:  
Մեռաւ Յազիերտն էլ,—Պերոզը նստաւ,  
Երբ Մամիկոնեան ՎԱՀԱՆԸ ծաղկեցաւ.  
Սորա գէմ Պարսից զօրապետներից  
Վեց անգամ սաստիկ կռիւ բացվեցաւ  
Եւ ամէն անդամ յաղթութեան փառքը  
Ժառանգեց տեսակ և եսակ հնարքով:

Վահանից յետոյ մարզպաններ եղան.  
Վահանի եղբայր՝ Վարդն, յետոյ Բաւրզան:  
Մէկժ գնունին Հոնաց հալածեց,  
Սրանից յետոյ Դէն—Շապուհն կարգվեց,  
Որի օրօքն էր մեր սուրբ Հայրապետ,  
Մովսէս երկրորդը՝ Հայոց թուական դրեց:  
Եւ փոքր Վարդան Մամիկոննեանը  
Սուրէն Մարզպանի դէմ կռիւ ելաւ,  
Սուրէնին սպանեց, զօրքերին ցրուեց  
Մինչ երկրորդ անգամ Հայերն յաղթվեցան:  
Պարսից Խոսրովի կարգադրութիւնով  
Բազրաատունին Սմբատ մարզպան կարգվեցաւ,  
Սմբատից յետոյ Հայերի վերայ  
Վահառունին Դաւիթ սորա տեղ կեցաւ:  
Երբ Պարսից Միհրանն Մուշեղի դէմ գնաց,  
Պայլ Վահանն նորա դիմացը. ելաւ,  
Մի քանի մարդով տաս Հազար զօրքին  
Զարդեց, հալածեց, Միհրանին էլ սպանեց:  
Նոյնպէս քաջութիւն իւր որդի Սմբատ  
Ցոյց տուեց Պարսից չորս պատերազմում,  
Վերջի անգամին Հերակլ կայսրը  
Կիւրապաղատ զրեց Դաւիթ Սահառունուն:  
Կորանից յետոյ կայսրն կոստանդին  
Վարազմիրոցի որդի Սմբատին  
Հայաստանի վերայ զրեց կիւրապաղատ,  
Զօրավար եղև Թէոդորոս Ռշտունին:

Նախ Հագարացիք, յետոյ կոստանդին  
 Դէպի Հայաստան պատերազմ եկան,  
 Վերջը Հայերը մոտան Յունաց ձեռքի տակ  
 Եւ կիւրապաղատ Համալսարակին ստացան:  
 Եւ Հագարացւոց Մավիէ Ամիրապետ  
 Համազասպից յետ եղբայր Գրիգորին  
 Տուեց պատրիկութեան մեծ իշխանութիւն,  
 Երբ Վարդ պատրիկը էր զօրավարը:  
 Վերջը Յունաց կայսր Յուստիանոս երկրորդ  
 Մինչ երեք անդամ պատերազմ եկաւ,  
 Կուածեց, Հայերին ձեռքի տակ առաւ,  
 Հիւլատոս պատրիկ Ներսէհին դրաւ:  
 Մեծ Ամիրապետն Հագարացւոց  
 Երեք տարուց յետ Արդլայ իշխանին  
 Հայաստան զրկեց Ռատիկան անուամբ—  
 Հայերն յօժարացան այս Ռատիկանին:  
 Սորանից յետոյ շատ ռատիկաններ  
 Մէկ մէկուց յետոյ նատան Հայաստան,  
 Անթիւ, անհամար չարիք զործեցին  
 Ու շատ վնասներ Հայոց հասուցին:

ԲԱԳՐԱՑՈՒԽ

**Ի**շխանաց իշխան Բագրատունին Աշոտ,  
 Եղև թագաւոր Ամիրապետէն,

Մինչև հինգ տարի փառաւոր կեցաւ  
 Շիրակ գաւառի մօտ վախճանեցաւ:  
 Յետոյ սորա որդի Միքատ առաջին  
 Եղև թագաւոր իւր հօր փոխանակ,  
 Հօր եղբայր Արաս, թէւ աշխատեց:  
 Որ ժառանգ դառնայ, բայց ընդ հակառակ  
 Խւր արած կոխւն զուր գատարկ անցաւ,  
 Յետոյ առաջին Միքատն օձվեցաւ:  
 Աֆշին ոստիկան կոխւ բաց արեց,  
 Միքատից յաղթութեց հաշտութիւն ինողեց:  
 Խւսութ ոստիկան Գագիկ Արծրունւոյն  
 Թագաւորութեան իրաւունք տուեց,  
 Երկուսով եկան Միքատի վերայ  
 Դառը տանջանքով Միքատն սպանվեց:  
 Կինդանի օրօք իւր որդի Աշոտ  
 Շատ կոխւ հանեց Խւսութի վերայ  
 Նախարարներն էլ տեսնելով սորան  
 Գրին թագաւոր Հայերի վերայ:  
 Խւսութ ոստիկանն շատ վնաս հասուց.  
 Առվ, մահ, զերութիւն և դառն վիճակ.  
 Բացի այս Աշոտ՝ կար այլ թագաւոր—  
 Գագիկ Արծրունին, Աշոտ բանաւոր:  
 Աշոտ երկրորդից պակաս չէր կոխւ,  
 Բայց չ յաղթվեցաւ ոչ մի թշնամուց—  
 Սորա պատճառաւ Երկաթ կոչվեցաւ  
 Մնաց թագաւոր մինչև որ մեռաւ:

Սորան ժառանգեց իւր Աբաս Եղբայր,  
Որի վրա եկաւ Ավիսաղներու բեր.  
Աբաս նուածեց ու գերեց բերին,  
Տուեց վախճան իւր փառաւոր կեանքին:  
Աշոտ երկրորդն էլ սորան ժառանգեց,  
Որը Հայերին խաղաղութիւն տուեց,  
Եւ Յունաց կայսր, Յովհաննէս Զմշկիկ՝  
Աշոտի վրա եկաւ, դատարկ յետ դարձաւ:  
Մերատ երկրորդը իւր հօր տեղ նստաւ,  
Անի քաղաքը պարսպապատ արաւ,  
Սա մեռաւ՝ յետոյ սորա փոքր Եղբայր,  
Գագիկ առաջին, թագաւոր դարձաւ:  
Սա խաղաղութեամբ ու հանգստութեամբ  
Բարեկարգութեամբ ու ողորմութեամբ  
Անցուց իւր կեանքը: Եւ իւր մեծ որդի  
Յովհաննէսն եղև թագաւոր Հայի:  
Սորա փոքր Եղբայր Աշոտն էլ ուզեց  
Որ ինքը լինի Հայոց թագաւոր,  
Եւ այդ պատճառաւ զօրքեր ժողովեց,  
Յովհաննէս—Սմբատին հեշտութեամբ յաղթեց:  
Նախարարք սորանց հաշտեցրին այնպէս,  
Որ Յովհաննուց յետոյ Աշոտին ընարեն,  
Շուտ մեռաւ Աշոտ, յետոյ Սմբատն էլ (Յովհաննէս),  
Աշոտի որդի Գագիկն ընտրեցին:  
Այս Գագիկ վերջին տասնեօթ տարեկան  
Դարձաւ թագաւոր Հայոց ազգութեան,

Եւ վեստ—Սարդուից արքունի գանձեր  
Ստիպմամբ առաւ, նորան բանտ դրաւ:  
Թուրքաստանի կողմէն անհամար զօրքով  
Արշաւեցին եկան Հայստանի վրայ  
Գաղիկ իւր հետ առաւ Գրիգոր Մաղմատինին,  
Գնացին դէմ յառաջ, — կոտորած տուին:  
Յունաց կողմից էլ պահանջեցին Անին  
Յաղթմած յետ զարձան խայտառակութեամբ,  
Կրկին Նիկողայոս պատերազմ եկաւ,  
Զարդված զօրքերով իւր տեղ յետ դարձաւ:  
Մոնոմախոս կայսրը հրաւիրեց Գագիկին,  
Երես առ երես պահանջեց Անին  
Յառաջ չ'յօժարվեց, յետոյ խոստացաւ,  
Վերջը Յոյներից ինքն էլ սպանվեցաւ:  
Այսպէս վերջացաւ Հայերի միջեց  
Այդ բաղրամունեաց թագաւոր դառնալն,  
Որ սկսվել էր Աշոտ առաջնից  
Մինչև Գագիկի կայսեր մօտ դնալն:

### ՌՈՒԲԵՆԵԱՆՑ

**Գ**ագիկ երկրորդը, երբ Յունաստանում  
Շահնուած՝ այս կողմն այն կողմն էր թափառում,  
Հայրա ազգական՝ Ուուրէն առաջին,

Վիմեց, դնաց դէպի կիլիկեայ երկիրն:  
 Երբ սորա անունն Հայերը լսեցին  
 Ճողովուած եկան օդնել Ռուբենին,  
 Մանաւանդ Գող—Վասիլ քեսնոյ իշխանը  
 Օշին, Ապիրատ Շնորհալոյ Հայրը:  
 Տիրեց Կիլիկեան Ռուբէն առաջին  
 Մինչև տասն և վեցերորդ տարին,  
 Սորանից յետոյ եղի ժառանգորդ  
 Իւր որդի Կոստանդին՝ առաջներորդ:  
 Սորա օրօք Եւրոպիոյ Խաչակիր զօրքեր  
 Արևմուտքից Եկան դէպի Արեւելք,  
 Սորանց օգնութիւն զնաց Կոստանդին.  
 Առան Երուսաղէմն Արաբացւոց ձեւքէն:  
 Կոստանդից յետոյ՝ Թորոս առաջին  
 Փառանդեց Հօրլ, Հօր մաշուան տարին.  
 Գող—Վասիլ հետ Ճակատ դուրս եկան,  
 Միւթացիք, Պարսիկք յաղթուեցան, փախանա  
 Լեռն առաջին, Կոստանդինի եղբայր՝  
 Շատ քաղաքներ առաւ ու Հարստացաւ,  
 Յունաց Յովհաննէս Կոմնէնոս կայսրը  
 Խարէութեամբ բռնեց և զերի տարաւ:  
 Բանտի մէջ մեռաւ Լեռն առաջին,  
 Փառանդեց աթոռն իւր Թորոս որդին.  
 Հինգ անգամ սորա դէմ Էմմանուէլ կայսրը  
 Կոխւ հանեց, յաղթուեց, անձար դաղարեց:  
 Թորոսից յետոյ իւր Մէշ եղբայր

Բռնի քաջութեամբ տիրեց Կիլիկեան,  
 Էմմանուէլ կայսեր ըրս պատերազմում  
 Ցոյց տուեց ուժեղ, յաղթող քաջութիւն  
 Եւ իւր բաջութեամբ շատ հպարտացաւ  
 Ուստի իշխանաց ձեռքով սպանվեցաւ,  
 Ռուբէն Երկրորդ ազգութեան կամքով  
 Աթոռին ժառանդ ու իշխան նստաւ:  
 Սա շատ ազգաշէն գործքով պարապեց,  
 Իւր ժառանգութիւնը եղբօրը յանձնեց,  
 Երբ աթոռ նստեց Լեռն Երկրորդը  
 Լաւ բարեկարգեց իւր տէրութիւնը:  
 Երկրորդ անգամին Գերմանացւոց կայսեր  
 Օգնեց, ստացաւ թագ արքայական.  
 Հայոց ու Յունաց և Լատինացւոց  
 Առաջեւ օծվեց թագաւոր Հայոց:  
 Իկոնիոյ, Բերիոյ Ամիրանէրին  
 Յաղթեց, քաջութեան անուն ժառանգեց,  
 Փառաւոր կեանքով, քաջութիւններով  
 Մեռաւ և Զառէլ աղջկանը թողեց,  
 Որը թագուհի գարձաւ Հայելին,  
 Կին գարձաւ Փիլիպ—Մօրից իշխանին,  
 Փիլիպպոս Հայոց տուեց նեղութիւն.  
 Փոխաղբեց Անտիոք գանձ, Հարստութիւն:  
 Հայոց իշխաններն բռնելով նորան  
 Բանալ զցեցին, ուր և մեռաւ նա,  
 Յետոյ իշխաններն Զառէլ թագուհուն

Տուեցին կնութիւն չեթում առաջնոյն:  
 Չարմաղան զօրավար Սկիւթացւոց աղղի  
 Եկաւ մեծ զօրքով Անին պաշարեց,  
 Եւ Մանդոյ խանին չեթում աղաշեց,  
 Որ մաերմութեան խաղաղ դաշն զրեց:  
 Ամիրայն ֆնդուխտար պատերազմ բացեց  
 Համարեա Կիլիկեան բոլորն աւերեց.  
 Չեթումի որդիք. Լեռն ու Թորոս—  
 Մէկը գերի գնաց, միւսը վիրաւորվեց:  
 Չեթում վերջն ստացաւ, իւր գերի Լեռն  
 Կարգեց թագաւոր իւրեան փոխանակ,  
 Երկու անգամ եկան Եղիպատացի զօրքեր  
 Կիլիկեան դարձին ամայի, աւեր:  
 Եւ Լեռն երրորդ սուգ ու կոկիծով  
 Անցուց իւր օրեր դառը ցաւերով,  
 Յետոյ իւր որդի, երկրորդն չեթում.  
 Նստաւ թագաւոր Կիլիկեայ երկրում:  
 Եղիպատացի Մէկը—Աշրաք Ամիրայն  
 Եկաւ մեծ զօրքով չռամկլայ քաղաք,  
 Գերեց Ստեփան Կաթողիկոսին,  
 Շատ աւեր տալով Հայստան երկին:  
 Չեթում իւր աթոռ իւր Թորոս եղբօր  
 Յանձնեց ու գնաց կրօնաւոր դառաւ.  
 Թորոս երրորդն էլ Չեթումին դարձուց  
 Իւր առաջ աթոռն, նա էլ վաճք մտաւ:  
 Չեթում իւր աթոռ իւր Սմբատ եղբօր

Յանձնեց ու գնաց Կոստանդինոպոլ,  
 Եւ երբ յետ դարձաւ, Սմբատի ձեռքէն  
 Թագաւորութիւնն կուզէր յևս առնուլ:  
 Սմբատ իւր եղբայր Յորոսին սպանեց  
 Եւ չեթում եղբօր աչքերը հանեց,  
 Սոցա փոքր եղբայր Կոստանդին երկրորդ  
 Յաղթեց Սմբատին, ինքը թագաւորեց:  
 Չեթումի աչքերն երբ որ լաւացան  
 Գարձեալ թագաւոր նա նստել ու զից,  
 Բռնեց Կոստանդինին ու Սմբատ եղբօրն  
 Կոստանդնոպոլիս ուղարկել տուեց:  
 Լիկայոնացիք ու Եգիպտացիք  
 Սորա դէմ եկան, յաղթահարվեցան.  
 Թորոսի որդի, Լեռն չորրորդին  
 Օծեց թագաւոր, քաշվեց առանձին:  
 Լատինաղաւան Հռովմայ պաշտօնեաց,  
 Մեծ քանակութեամբ կային մեր երկրում:  
 Լեռն ուղեց մի քանի ծէսեր  
 Սոցա կրօնին յարմարացնել,  
 Ուստի ազգամպետք շուտ զրգուեցին  
 Թաթարներու Խան Պիլղար իշխանին.  
 Չեթում ու Լեռնին սա Հրաւիրեց  
 Գաւաճանութեամբ սպանել տուեց:  
 Օշինն էլ, Լեռն չորրորդի եղբայր  
 Զօրքեր ժողովնց Պիլղարին հայածեց  
 Եւ իւր եղբօր տեղ թագաւոր նստեց,

Նասր Ամիրայի զօրացը յաղթեց։  
Տասնամեայ մանուկ, Լևոն հինգերորդ՝  
Յաջորդ Օշենին նստաւ թագաւոր,  
Իւր աներ Օշենն էր հոգարարձուն,  
Որը շատ խնամով էր կառավարում։  
Թէմուրդաշ խանը, թուլբամին Արաման  
Ռանակով արին, քանդին Հայաստան,  
Պարզամիտ Լևոնն Օշենին սպանեց,  
Նոյնպէս իւր կնօջ նոյն մահուան մատնեց։  
Եւ Սիկիլսայի թագաւորի աղջեկ,  
Կոստանդիայ դժխոյն՝ առաւ իրան կին.  
Եղիպատայ Սուլթանն պատերազմ բացեց,  
Կիլիկիան ամբողջ ոսնակով արեց։  
Լևոն հինգերորդ մեռաւ անժառանդ,  
Կոստանդին երրորդ առաւ զահ ու թագ,  
Իւր գործքով եղաւ ատելի անկարդ  
Շուտ սպանուեցաւ և կորցրուց իւր փառք։  
Սորա տեղ նստաւ իւր եղբայր Գուհառն,  
Որի օրօք գարձեալ Եղիպատացիք եկան,  
Զգուանք էր գարձել և սա Հայերին,  
Ռւստի սորան էլ շուտով սպանեցին։  
Կոստանդին չորրորդ թագաւոր նստաւ,  
Իմ Հայաստանին խնամել ջանացաւ.  
Եղիպատայ Սուլթանն գարձեալ գէմ եկաւ,  
Սակայն կոստանդինց յաղթուած յետ գարձաւ։  
Կոստանդինն էլ, երբ անժառանդ մեռաւ,

Լատինաց, Հայոց վէճը սաստկացաւ.  
Մնալով անդուս մինչ երկու տարի,  
Հայք Քէռ Ընտրեցին տէր Կիլիկիայի։  
Դու խոհեմ, Համեստ, Ընտիր արարած,  
Քեզ թագ պարգևել արժան դատեցան,  
Յուսամ, պաշտօնիկ Համալպատասխան  
(Տայ Աստուած այն ձիրք), կ'պահես Կիլիկիան։  
Շատ ազգեր անկրօն, անխիղջ, օխերիմ  
Կ'գան Քեզ վերայ, չ'յուսահատուես,  
Կաց Հաւսոռարիմ, Վերջին Ճիգդ թափիր,  
Ազգութիւն, անուն պահիր, պաշտպանիր։  
Պատաճառ, Քու նախնիք, նահապետք, իշխանք  
Զօրեղ թագաւորք, ազգասէր մարզպանք  
Հայի արինով ու իրանց մահով  
Թէ անուն, թէ թագ, թէ աթոռ, թէ փառք  
Գնելեն, պահել ու պաշտպանել են,  
Եւ մինչե այսօր կեանքը Հայերի  
Ստրուկ չե գարձել անդութ ազգերի,  
Թէև միշտ զոհուած շատ արկածների։  
Ղէհ կեցիր ողջմամբ։ Ասեց ու թռաւ—  
Լևոնի աչքից Հոգին հեռացաւ։  
Լևոն գարթեցաւ, տրտմալից սրտով  
Աներ ուղեց աչերն, լի արտասուքով,  
Օվրկինք գուեց նա—ինչ անտանելի,  
Ո՛չ, որքան փշոտէ թագն Հայաստանի»...

Ե Խ Ո Ն Ի Տ Ե Ա Ն Զ Յ

**Ա**քանի տարի Լևոն վեցերորդ  
Հանգիստ ու անհոգ հաղիւ թէ կեցաւ,  
Եղիպասայ սովոր զօրաց բազմութիւն  
Դարձեալ Կիլիկիոյ վրա յարձակվեցաւ:  
Զարդեցին բնաւին և կոսորեցին  
Թէ մանուկ, աղջիկ, թէ այր և թէ կին,  
Ողբ ու աղաղակ, գոռոցք ու գոչիւն  
Կիլիկիոյ երկրից երկինք էր համում:  
Փոքրիկ Կիլիկեան, հարուստ ոսկէ հատ,  
Անգութի ձեռքից դարձաւ անապատ,  
Անթիւ աւարներ կապտեցին տարան,  
Ողջ երկր տիրեց սով սաստիկ, անհատ:  
Այս անակնկալ յանկարծուստ դիպուածք  
Այրեց Լևոնի սիրտ, հոգին համակ,  
Անպատճաստ դոլով՝ չէր զօրաժողով  
Չ'կարաց դէմ կանգնիւ քանի մի մարդով,  
Ուստի յաղթվեցաւ, խնդրեց հաշտութիւն,  
Բայց չ'զտաւ երբէք քաղցր հանգստութիւն.  
Հինգ տարուց յետոց դարձեալ յարածիոց  
Եկան տալ կռիւ չար Եղիպատացիք:  
Լևոն քիչ զօրքով էլի դուրս եկաւ  
Եւ գոռ թշնամուց սաստիկ յաղթվեցաւ,  
Թշնամու սրով ինքն էլ խոցվեցաւ,

Թողեց իւր պաշտօն ու անյայտացաւ:  
Կատաղի դաղան, անգութ թշնամիք  
Դարձեալ Կիլիկեան տակնուվըայ արին.  
Կնչպէս բոլորը, նյոնպէս թաղուհին  
Չ'զիտէր, թէ ուր է իւր խեղճ ամուսինն:  
Բայց երբ թշնամիք բաւականացան  
Ի'նչ վես տուին թողին հեռացան,  
Թաղուհին շուտով իմացում տուեց  
Փիլիպապալին, որ էր իւր ազգական:  
Եւ Փիլիպապալի ազգաբարութեամբ  
Եւրոպայ Փափը ու թաղաւորներ  
Առաջարկեցին Օթոն Բրաունշվիզեանին  
Ամուսնացնել իւր հետ Սարբիամ թագուհուն  
Եւ ժառանգ գառնալ կորած Լևոնին:  
Օթոն յոժար էր, սկսեց կատարել,  
Բայց յանկարծ Լևոն իւր կորած տեղին  
Ցայտնվեցաւ, նորէն սկսեց թաղաւորել:  
Երկու տարուց յետ Սուլթանն Եղիպատաց  
Էլ—Եշրէֆ—Շապան եկաւ Կիլիկեայ.  
Ցայնժամ Լևոնն իւր ընտանիքի հետ  
Անձարացած մոտաւ բերդն Կապանայ:  
Երբ որ թշնամիք քարուքանդ արին,  
Եկան Կապանայ Բերթը պաշարեցին,  
Ինն ամիս մնաց Լևոն պաշարուած,  
Վերջը անձնատուր եղեւ թշնամեաց:  
Խեղճ Լևոն, կրկին շղթայով կապած,

Գերի տարուեցաւ երկիրն Եղիպտոս,  
Ուր անցուց մինչև եօթ տարի միջոց,  
Կրելով վեշտերի վառուն կրակ, բոց:  
Վերջը երբ մեռաւ էլ — Եշրէֆ — Շասլան,  
Ու Մէլիքն — Սալէհ կարգուեցաւ Սուլթան,  
Սպանիոյ Յովհաննէս արքայի խնդրանօք  
Աղատուեց Լևոն գերի ընտանեօք:  
Բայց չուզեց կրկնն թագաւոր նստել,  
Պատճառ կիլիկեան դարձել էր աւեր.  
Չ'կար նիլիկիայում ոչ գեղ, ոչ քաղաք,  
Որ գոռ թշնամուց քանդուած չ'լինէր:  
Ուստի ընտանեօք զնաց Երուսաղէմ  
Համբուրել ուստիւ գերեզման Փրկչին.  
Թողեց այնտեղ իւր աղջիկն ու ամուսին  
Եւ հրաժարական կարգաց յաւագին:  
Ո՞վ իմ թագուհի, համեստ ամուսին,  
Եւ զու իմ աղջիկ զաւակ իմածին,  
Տեսաք իմ յաւեր, բազմաթիւ վեշտեր,  
Որք եկան գլխիա, կորցրին իմ օրեր:  
Մնացէք բարեաւ զուք աստ յաւալի  
Եւ ձեռք Արարչին թռող ձեղ խնամի,  
Խոկ ես զնումեմ զինչ թափառական,  
Գուցէ ինձ գտնեմ մի տեղ հանգստեան,  
— Այս ասաց, ընկաւ նոցա պարանոց  
Գրկեց, համբուրեց վերջին բարեով,  
Ճանապարհ ընկաւ ինքը միայնակ.

Անցաւ ու գնաց, հասաւ մինչ Հռովմ:  
Այնտեղեց անցաւ, գնաց Սպանեայ,  
Անդադար քայլեց մինչև Անդղիայ,  
Յետոյ յետ դարձաւ դէպի Գաղղիայ,  
Գուցէ անդ գտնէր հանդիսա մշտակայ:  
Թափառուն քայլեւ, ցաւօք սրտակէզ  
Մտաւ բնակվել քաղաքն Փարիզ,  
Ուր ինչպէս օտար ցաւեր կրելով:  
Ապրում էր տիսուր, անհանդիսա կեանքով:  
Թողած իւր քաղաք, իւր շին երկիրներ  
Թշնամու կոխան, ամայի, անտէր,  
Ինքը, հասարակ մի օտարական —  
Փարիզում անտէր, աստ անդ էր շնջում,  
Նրբեմն զուրս գալով քաղաքից հեռի,  
Հովհան դաշտերում տիսուր թափառում:  
Դիշերներն անքուն առանձին նստած  
Խոր մաածնունքով էր անցուցանում.  
Իւր նախնի փառքերն երբ միան էր բերում,  
Աչքերից դառը արտսուք էր թափում.  
Անխնայ խոցոտուած իւր ճակատագրից,  
Իւր օր ու արև, կեանքն էր անիծում.

Ց Խ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ապոյտ կամարում վարդեայ արշալոյս  
Զուգուած, զարդարուած հաղար մի գոյնով,  
Անոյշ, քմծիծաղ. իւր դէմք գեղալոյս  
Հանդէս էր բերում անձառ հրաշքով:  
Բայց այս զարդ բնութեան երկնից կամարին  
Զէր ինչ սփոփանք ցաւոց օտարին:  
Անոյշ զեփիւոփ զովաբեր քամիք  
Կանչասաղարթ շաղոտ ծառներին  
Տերեներ ցնձում, ծածանում մեղմիկ  
Կեանք, հոգի տալու թարմու զով օղին:  
Այս հրաշալի տեսարան ահեղ Արարչին  
Զէր ինչ սփոփանք ցաւոց օտարին:  
Լուսուտակ գոյնով տարածութեան մէջ  
Վառ աստեղների լուսաւոր բանակ,  
Երկու լուսաւոր կանթեղներ անշէջ  
Լուսացող պայծառ Լուսին, Արեգակ.  
Զուր, այս լոյս ծրագներ երբէք, բնաւին  
Զէր ինչ սփոփանք ցաւոց օտարին:  
Նախած վետուրով օդաճեմ թռչունք  
Առաւօտ, երեկոյ կան համեղախօս.  
Կարկաջող առուակ, շեմթ շեմթ պաղպաջմունք  
Աղբիւրի ակից խոխոջ մշտահոս:  
Հիւրնկալ ափանց մախմաւո դալարին  
Զէր ինչ սփոփանք ցաւոց օտարին:

Խնկահոտ բուրմունք: Ծաղկոտ դաշտերի  
Նալոգիզ, նունուժար, մեխակ, վարդ, շուշան  
Ասպարէզ էր մանկան, նոր կեանք ծերերի,  
Նորահաս աղջկան վեսայից նշան:  
Այսպիսի շքեղ տեսարան անդին  
Զէր ինչ սփոփանք ցաւոց օտարին:  
Աւ սաթի գոյնով հիւսուածքը վարսի,  
Ոգելից ժակար յաւերժահարսի,  
Նորա նուրբ զգեստ ծովափրիուրի  
Աքողէր կաթնաբուղիս ստինք շուշանի  
Եւ շատ մեծակիու պճրանք գլխովին  
Զէր ինչ սփոփանք ցաւոց օտարին:  
Բայց միայն, եթէ իւր օտարութիւն  
Թողէր և գնար աթուախն հասնէր,  
Աւ աւեր դարձած հարուստ կիլիկեան  
Կարգուած, նորոգուած կրկին տեսանէր,  
Յայնժամ տեսարանս այս շատ մեծազին  
Է՛ր միայն սփոփանք ցաւոց օտարին.

Ց Խ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Օդի անսահման տարածութեան մէջ  
Մութն անօսրացած՝ լուսի դէմ կաղնած.

Ուզում էր բանալ լուսի հետ մեծ վէճ,  
Գուցէ երկարի ժամերը կենաց:  
Բայց կամաց կամաց հեռացաւ գնաց,  
Յաղթուած նա լուսից անզգալի կերպով.  
Երկնքը էլ չէր տխուր, ամպամած,  
Մածկած իւր երես սև սև թուխպերով:  
Առաւօտեան զարդ—շքեղ արշալոյս  
Նոր ծնանելով իւր լոյն անպարփակ  
Եւ արևելան երկնքի վերայ  
Թափվում էր իբրև մի կարմիր ծովակ:  
Այս բնութեան զով տեսարանի հետ  
Սկսեց արևելք վարդագոյն վառվով,  
Դեղնախառն ձաձանջք սկսան այնուհետ  
Սարի քամակից կամաց դուրս ցայտվել:  
Շիջան և յայնժամ բիւրաւոր կանթեղք,  
Որք անձէթ վառվում են զիշելներում  
Եւ հսկայած իշխանն—Արեգակ  
Դուրս եկաւ փառքով անսահման, անփակ:  
Գոյնով զարդարեց բոլոր էակներ  
Եւ կենդանացան թուփեր, անտառներ,  
Բաց են ծաղիներն, բոյսերը կանաչ  
Խրեանց մէջ առնել արեի ձաձանջ:  
Մի կողմից օրը նթաց, խշշիւն կատաղի  
Վազում էր ահեղ ջուրը փրփրուն  
Քերելով ափերք հսկայ Սենայի。  
Ահագին դոռոցք օդը տարածում:

Անփարաստ սրտիկ: Մի մարդ զայրադին ապրած զնորդ  
Կիշերներ մինչ լոյս այստեղ շնչում էր:  
Անզգայ էր նորան այս վսեմաւթիւն  
Տեսարան բնութեան, որ հանդիսանում էր:  
Ահեղ որոտմունք—ջրի արձականք  
Քանի կատաղի սուր էր ընթանում,  
Այնքան բիւր մոքեր ու բիւր հառաջանք  
Օտարի սրտից զալիս էր անցնում:  
Գտաւ դալարի մախմուռ խոտերում  
Հանգիստ նստելու մի տեղ տափարակ,  
Զայրութից սփոփուիլ գուցէ մէկ վարկեան  
Այն ևս քսոցը էր և սրտի փափագ:  
Թուլցած, շուարած, ապուշ մնացած,  
Իւր սրտի խորքից մի տիս հառաջեց,  
Քունը գալիս էր, բայց սիրտը տիրած  
Արգելում էր, որ շատ անզամ զարթնեց:  
Խորին տիրութեամբ գետի մօտ նստած  
Ասում էր մեղմիկ նա ինքն իւր մաքում:  
Պանիս, մինչև այսօր հողուս շառաւիղ  
Այնպէս էր փայլում իմ լոյս աչքերում,  
Ինչպէս շառաւիղը լոյս արեգական  
Փայլում են երկնից մանր ցողերում:  
Բայց այժմ բերկութիւնն ընդհանուր բնութեան  
Այլ ևս չունի տեղ իմ տխուր սրտում:  
Ի՞նչ աննման է զուարիթ առաւօտ  
Եւ պայծառ բնութիւն ծաղկեալ ժայիտով.

Երբէք ծաղկաստանն այս կանաչարօտ  
Այսպէս չէր բուրած անուշիկ հոտով,  
Երբէք ծիծեռնակ, վարդանուեր սոխակ՝ ով առըն  
Այսպէս գեղեցիկ իսկ չէին երդած,  
Երբէք երկնաջահ հսկայ Արեգակ՝ ով առըն  
Բնաւին այսպէս պայծառ չէր փայլած:  
Վաթսուներորդն է տարիքիս հասակ,  
Որ կեանք եմ վարում ըզձիս հակառակ, ով առըն  
Բայց չեմ կշտանում գեռ ես աշխարհից, ով առըն  
Բարի Արարչի անթիւ գործքերից:  
Նայելով յստակ երկնքի վերայ,  
Որ նմանում է բարձր վրանի,  
Աչքադարձ լինեմ և երկրի վերայ,  
Որ ծածկվում ծաղկով ամենայն տարի:  
Որ մարդ կ'լինէր մեռանիլ կամէր,  
Նմէ չունենար իւր սրտում վիշտեր,  
Գուցէ այսպէս է կարգել մեր Աստուած,  
Որ անմահ մեր հոգին յիշենք անմոռաց:  
Այսպիսի անթիւ մոլքերով զբաղված  
Յաղթվում էր քնից առ սակաւ սակաւ,  
Գոլսեց տեսարանն այնպէս զարդարված:  
Շատ ափսոսեց նւ այդ նպատակաւ  
Աչքերն ուղղակի յետ դարձեց մի կողմ,  
Բայց այլ գառնացաւ իւր սիրտ զայրազին.  
Ի՞նչ դառնութիւնով գոհար կաթիլներ  
Ցայտում էր աչքից մի կին առանձին:

Ճանաչեց մարդը, թէ երբ էր տեսել —  
Թագաւորութեան առաջնն օրում,  
Երբ եկաւ մօտը շնորհաւորեց  
Կորա թագ, պաշտօն, գիշեր երազում:  
Բայց այն երեսի պատկեր վառվառն,  
Եբբ ամառնային բացուած արշալը՝  
Դարձել էր խաւար արտասուաց կեխառլ.  
Չէր այլ ժպիտով ծիծաղ գեղալը:  
Պատկար խճճուած, սև քօղով ծածկուած:  
Ցնցոտի զգեստ իւր վերայ ձկած,  
Բորիկ ոտերով, ծակոտուած կոշկով,  
Անինսամ, աղքատիկ, անտերունչ գէմբով  
Դարձաւ, մօտ եկաւ այն տխուր մարդին,  
Որ մինչեւ յայնժամ նայում էր նորան.  
Պ՛վ դու մարդ, ասաց խոր հառաչելով,  
— Մեռեալ Հայկաղունք, հսկաներ համայն  
Քեզ վերայ են այժմ ողբում սրտակէզ:  
Դու այս օտար տեղ արդեօք ի՞նչ կանես,  
Ո՞ւր գահ, գայխոնն իմ Հայաստանիս,  
Ո՞ւր թողել անհոգ՝ այստեղ եկել ես:  
Աթոռ ու թագից զուրկ օտարականն  
Չ'տարաւ ցաւոց իւր անտանելի.  
Դղբդվում էր սիրտը, մինչ հարկադրվեց  
Թափել արտասուք դառը վիշտերի:  
Ո՞ւր ես արեան տեղ արտասուք թափում,  
Ինչո՞ւ ծուլացար ազդ կորցնելու,

Ինչու պաշտօնիդ համակառասխան թրամ ընկանաց  
Արթուն չ'կեցար աղդ ազատելով: Խոճով ուրբագրան  
Թողել ևս Հայաստան, Եկել Երովաց, առ արձ պատ  
Օգնութիւն խնդրիր զոնէ մի կերպով, բայց ազու  
Գերութեան վիճակ քաղցրէ քեղ, ապա մաս մաս  
Թող մաշվի քու կիանք գերի օրերով: Խոճուն պատ  
Տե՛ս պսակազարդ ՊԱՐՈՅՐ, ՀՐԱԶԵՍՅ  
Կ'ողբան Հայերին, պատճառ թագ ու զահ  
Չ'ինի այսուհետ ոչ ի Կիլիկեայ  
Եւ ոչ յԱնի, Դուին, Մծրին, յԵղեսիայ:  
Մասիսի զլսին նատած հսկաներ,  
Անմահ փառքերով Հայ դիւցազուններ.  
ՀԱՅԿ, ԱՐԱՄ, ՏԻԳՐԱՆ, ՎԱՐԴԱՆ, ՎԱՀԱՆԵՐ  
ՈՂբումեն, ողբում սրտով տարուբեր,  
Պատճառ այն անմահ նոյս յիշտատակ  
Նոցա արիւնով դնուած դաւազան  
Զարդվեց քո օրով: Մնաց և հոգեակ  
Թոյլ, թերամեռիկ, հիւանդ, կիսինդան:  
Պիտ' այսուհետե դատարի, ձեւնունայն  
Նրջի ամէն Հայ օտար երկիրներ,  
Ել չ'պիտ' ծնուին ՀԱՅԿ, ԱՐԱՄ, ՏԻԳՐԱՆ,  
Որ ապատ պահեն Հայի դաւակներ:  
Թէ ծնի Հայաստան միւս անդամ ՎԱՐԴԱՆ,  
Նա օտարը պահելու կթափէ վարդ արիւն,  
Թէ ծնի Հայաստան միւս անդամ ՎԱՀԱՆ  
Նա կ'դառնայ վահան օտար ազգերուն:

Որբ Մայր Հայաստանն թռւխում համակած  
Կ'ողբայ այտուհետ սուզի սկերով,  
Պատճառ իւր որդիք հայրենիքից զոկուած  
Օտար հողերում կան թափառելով:  
Զանազան ազգեր Հայերին պիտ' աիրեն,  
Անլոյծ շղթայով իւղեց ազգին կապեն.  
Երկաթի կապանք ո՞նց տանեն խեղձեր,  
Մինչ ազնիւ, աղատ ասկիլ սովորեն:  
Իւրեանց մօր զրկում հիմայ մանուկներ  
Գերութեան լջում բաց կանեն աչքեր,  
Թէ կաթնասմունդ մայրերին հարցնեն.  
Աինչու ենք գերի մենք ուլիշներին,  
Մայրը սուզ, տրտում, դառն արտասուբով  
Կ'շկվի պատմել, պատասխան առնել,  
Լուռ, անձայն, անշունչ մայրենի զժով  
Կաշխատի մանկան հարցը մոռցնել:  
Թէ ծէս, թէ կրօն, թէ անուշ հողի  
Կ'զոհուին անշուշտ զեղս մօլորութեան,  
Կ'աղաւաղուի աղդ, նոյնակն և լեզուն,  
Զի՞ մնալ բնաւին նշան զտութեան:  
Այն դեռածաղեկ սուրբ կրօն, հաւատ  
Զիցէ ենթարկուի տիրաձան ազգին,  
Բարեյոյս վիճակ, թէ աղդ բարեպաշտ  
Տիրի կրօնին, նոյն և խեղձ ազգին:  
Արծարծել Հայի պարզ, պայծառ սրտում  
Եռանդ, սէր, ազնիւ հաւատարմութիւն,

Մտսւոր հայեցմամբ սլիտ՝ անկեղակարձ  
 Վինին մտերիմ բարեպաշտ մարդկան.  
 Այսօրից միայն ևս կ'սիրեմ նորան,  
 Որ Հայկազուն է, Հային անմոռաց,  
 Կ'հնչէ մշտապէս ԱՐԱՄ ու ՏԻԳՐԱՆ  
 Ա'յիշէ իւր նախնեաց յիշատակ փառաց,  
 Կունենայ արիւն և սիրտ և հոգի  
 Սիրելու մի որբ տառապեալ կնօջ,  
 Որ անխնայ խնամով մնուցել նորան  
 Հայ այգեստանում, նորասունկ բողբոջ:  
 Որի հոգին անշուշտ կ'քաղլի, մաշվի,  
 Քանի մի կաթել կ'զլորվին աչքից,  
 Որի արիւնը կ'եռայ երակում,  
 Հառաշանք կ'թռչն իւր սրտի խորբից:  
 Ես նորան միայն կ'սիրեմ սրտով,  
 Զէ թէ ամէնին, որ Հայ կ'կոչուի  
 Ես նորան միայն մնուցանելով  
 Կ'դառնամ ընկեր, ընկեր սիրելի:  
 Թէ պատերազմում, անապատ դաշտում,  
 Թէ տան մէջ նստած, թէ ճանապարհում  
 Խնձով աներկիւղ՝ զուարթ կ'խորհի,  
 Թէ ննջի ստուերում—քաղցրաքուն կը լի:  
 —Դնա ո՞վ կ'եռն, վախճանդ հասած է,  
 Շուտով աշխարհից հրաժարուելու ես,  
 Աթոռանիստ քաղաքդ թէ կ'իլեկեան է,  
 Բայց դու Փարիզում հողին կ'աւանդուես

Ա'երջին թագուհի տանն Հայաստանի  
 Եւ Հայոց տիկնաց տիկին Մարիամ,  
 Այրի ամուսինդ պլիտի հրաժարուի  
 Հայից, ասելով • ևս վախճանած կամ»:  
 Մահիցդ յետ կ'գայ թաժմար Լանկ—Թամուր  
 Կործան տապալել Սիւնիք, Սեբաստեայ  
 Եւ Հայաստանի մնացեալ ոյժն  
 Մոխիր կ'զարցնէ անխիղջ, անխնայ:  
 Ես էլ ցաւելով, Հոգիս սրատես՝  
 Դառը արտասուք պլիտի ողողեմ,  
 Պատմառ Հայաստանն այլոց ոտնակոխ  
 Ա'ն, այսուհետեւ պլիտի տեսանեմ:  
 Գուցէ կամենաս, որ ինձ Ճանաչես,  
 Թէ ով եմ, ինչ մարդ Հայաստան կոծող,  
 Հոգին եմ, Հոգին ես, Հայաստանի,  
 Թարշամած ծաղի կ'ն Հայ բուրաստանի:  
 Այս ասաց՝ լոեց: Մէկ թռաւ օղի մէջ,  
 Մէկել վայր իջաւ: Այսպէս ել և էջ,  
 Մտաւ Սենայի արագհոս ջուրը  
 Եւ ծածկուեցաւ ջրում այդ կ'իրը:  
 Կայծակներ շեշտուեց Լեռնի աչքից,  
 Բոց, կրակ վառվեց նորա խոր սրտում,  
 Մազերը քստմնած ահ ու երկիւղից  
 Լուռ ախեր հնչեց իւր սրտի խորքում:  
 Թռւլցած, գողդոջուն, անհնարին սարաւի  
 Խւր երակներում առած, վեր թռաւ,

Շշլուած, անզգայ և կուրախարիսակի որում մեջնքի  
կամացուկ քայլով տուն վերադարձաւ:

**ՅՈՒՍԱՅԱՏՈՒԹԻՒՆ**

**Գիշեր էր:** Այն ինչ մթին թուխակերով  
Ծածկուած երկինքն, շքեղ աստղազարդ, որ զամբ  
Թափում էր մրրիկ մուժ աղջամուղջով՝ ունաս  
Անձրե յորդահոս, հեղեղ շրջապատ:

Եւ կայծակների ճրադ թափանձանց Անհնարին գոռոցք, աղեղ որոտմունք,  
Կարծես վախճանն էր աշխարհի մարդկանց,  
Քանդուեցին ահա մշտատե հիմունք:  
Անմեղմ փոթորիկ, կատաղե քամիք  
Ճայթիւն, ճռնչիւն, սուլիչ, աղաղակ  
Յած զլորելով ամէն ծառ, տունկիք,  
Տաղով ֆարիզին աւեր վլատակ:  
Եւ ահաբեկուած մարդիկ քաղաքին,  
Ամէնքն տուն վախան, որ պատսպարվին,  
Դիցէ մի մնաս երկնից բարկութեան,  
Մտածում էին, թափվի մեր զիմին:  
Նոյն ժամին մի մարդ օտար ու գերի,  
Վեր ընկած տան մէջ սաստիկ յուսահատ,

Անշէջ կրակով բարկացոտ սրտի  
Այլփում, խորովգում, տարուբեր աստ անդ,  
Աշքերից ցայտգում վառ շանթի կայծեր,  
Պոռում, աւաղում իւր կեանք կարձատե,  
Մազերի գանգուր, երկար խոսլովիք  
Զգելով կանչում. ո՞ւր կենացն արև,  
Ո՞ւր պերճապսակ թագն Հայաստանին,  
Ո՞ւր արև պայծառ իմ անդաստանին,  
Աթոռն իմ փառաց մնաց գահամիւժ—  
Փշրվեց ծառիս կանաչի ուղեւ:  
Այս ինչ ժամ, վարկեան, այս ինչ օր դաժան  
Տարուբերփում են խայթոցք իմ խղճիս,  
Ի՞նչ ասեց ինձի այն Հողի—տղջեկ  
Խոր տպաւորութիւն ներգործեց սրտիս:  
Ո՞հ.... չկայ զայխոն փառաց Հայերին  
Չ'ինիր թագաւոր մերտ ազգախնամ,  
Չ'ինիր այսուհետ աթոռ արքունի,  
Չ'ինիր ազգութիւն միակ համակամ:  
Աւալ, չեմ տեսնիլ այլ այսուհետեւ  
Բարգաւած ծաղկեալ երկիրն անձկալե,  
Երկիրն Հայերի—գուարճ Հայաստան,  
Գաղցրազով օդով տեղեք բերկրապիւն:  
Եւ յարազուարճ շքեղ դարաստան,  
Հողագործ Հայի կանաչ անդաստան,  
Անուշակ հոտով ծաղկեայ բուրաստան  
Նղան այսուհետ վայ ու վայաստան:

Գաղցրաշունչ հողմիկ, հարթարդակ տեղիք  
 Եւ ականակիտ կաթնով աղբւրիկ,  
 Վիւրախաղաց գետ և թեթեաշարժ  
 Այժմայս ցաւարան Հային սրտաշարժ:  
 Դալսր ուռենու հոտը զարունքին  
 Գեղեցկաշքեղ վարսաւոր ծաղին,  
 Անթարշամելի և մշտականաչ  
 Սաղարթիք ծառոց և տունկիք բարդաւաճ  
 Եղեն աւերակ, անտէր, ամայի,  
 Պատճառ, աղձամուղջ մթին խորհուրդներ  
 Ոխերիմ անգութ թշնամեաց սրտի  
 Վճռեցին Հային զառն բոպէներ:  
 Պատճառ, դաշտերում էլ չեն երեալ  
 Կաղնիլ պատրաստի գոռ, պատերազմի,  
 Արեան ճաղաղեաց մէջ անվախ երթալ,  
 Խողխողել կոկորդ անհաւատ աղգի:  
 Գեղեցկահրաշ Հայի զաւակներ,  
 Միշտ քաղցրաճաշակ մայրենի դթով  
 Պահած, սնուցած, այժմ տարուբեր  
 Ցողում են արտսուք դառը վիշտերով  
 Եւ ծաղկատարափ դաշտերի միջին  
 Զգեստապայծառ քաջառոյդ աղջիկ,  
 Նորա միայօն աչեր նաղանի  
 Արտասուք, լացից չեն այլ գեղեցիկ,  
 Պատճառ, իւր սրտի ընտրած փեսացուն  
 Վաեմ, փառացի, աղնիւ, անվիհեր


Դաղթուած է, գերի է, թէպետ Հայազուն,  
 Ինչպէս է ծառայն անհայր, որբ, անտէր:  
 Սպիտակավարս ծաղկեալ ծերունի,  
 Քաջապինդ նեցուկ տանն Հայաստանի,  
 Զարդուբուրդ եղել թշնամու ուժից,  
 Իմ անզօր բազից, դիւրաթեք խելքից:  
 Մէր անհամեմատ էր սերտ ընտանեաց,  
 Որթ ողկուզաբեր էր Հայ տանուտէր.  
 Այդի վայելուշ իւր մի տանտիկին,  
 Նօրատունի բողբոջ իւր Հայ զաւակներ:  
 Ուր շեջելավառ կ'մնայ առաւօտ—  
 Ճրագն անշէջ լոյս տանն Հայաստանի,  
 Միջօրեայն անստուեր, արեւ անսաղօտ  
 Խաւարչուա լուսով մյժմէն կ'փայլի:  
 Ինչպէս գաղտորսակ, ծածուկ որոգայթ  
 Եւ դարանագործ անչափ մեքենայը  
 Յանկարծուստ հասան անձիս դիւրագայթ  
 Որսալ, բանդարկել հանգիստ, անսայթաք:  
 Շիջաւ, մարեցաւ կայծակն արծարծիչ,  
 Շրջապատեցան աղէտը դառնութեան,  
 Ցուսահատ սրտիս ախտը զրդոիչ  
 Բորբքվում է միշտ ոգով չարութեան:  
 Իմ զուարձութիւնք, փառքն ամենապարծ  
 Խորասոյզ զնաց յատակն անդունդի,  
 Մրոյր դառնութեան դաժան, չար աղզի  
 Սպառնացաւ վրաս մահ անփախչելի:

Ամօթ, նախատինք յաւելունական  
Ամէն ազդի մէջ ինձ կ'յաւերժանան,  
Տկար և վտիտ, երկըոտ կ'անուանեն,  
Թոյլ, հիւանդ, անզօր կ'ասեն, կ'ծաղրեն;  
Էլ ինչու պէտք է ապրել ցանկանամ,  
Մինչ էլ չեմ կարօղ փառք ու կեանք դտնել,  
Մահ, դոյթիր աչքերս, բաւական մնամ.  
Խիղճը իմ սիրտս քիչ չէ խոցոտել . . . :

Ս Ա Յ

**Ա** օր յուսահատ կեռն թափառուն  
Վաշ վերկացած իւր սովորութեան պէս,  
Խջաւ ու գնաց Աննայի ափը,  
Նստեց արօտում մի կանաչսէզ:  
Խոր մաածութեամբ, տիսուր աչքերով  
Նայում էր սպիտակ փայլուն ամպերին,  
Որք ծովի հանդարա ալիքների պէս  
Խաղաղ օղի մէջ տատանվում էին:  
Թափում էր դոհար ցոլուն կաթիլներ  
Կանաչով հասած բնութեան վերայ,  
Հսկայամարմին անդամանդ—Արև  
Լողում երկնքի կամարի վերայ:

Փչպում էր սուլուխ քամին ցրտադին,  
Պատճառ եղանակին էր աշնային,  
Զիւնով ծածկուած սարերին նայեց  
Ծերութիւն ու մահ նա մտաբերեց:  
«Ո՛վ բարի Աստուած, զուեց միաձայն  
Խորասցզ եղած իւր մոքով համայն,  
—Անմիւ հալածանք, անհամար ցաւեր,  
Աղի արտասուք և գառլ վիշտեր  
Շատ տեսայ: Սակայն ևս իմ կեանքի մէջ  
Հաւատթիս հաստատ մինչև կեանքիս վերջ  
Կացի քո առաջ: Այժմ հաւատարիմ  
Իմ կեանքն ու հողին ևս գեղ կ'յանձնեմ:  
Զգում եմ իմ մէջ տկար թուլութիւն.  
Գուցէ մեռանիմ, հողին աւանդվիմ,  
Իմ ցաւոտ ոսկերք թոնի գեջ հողի մէջ  
Ամփոփուին խակոյն, գէթ հանդիստ լինեմ:  
Թող շիրմիս վերայ ամէն մի չայ դայ,  
Նայի ինձ վերայ ու դաւն ողբայ,  
Որ անբաղդաբար իմ օրով եղև,  
Որ կորաւ չայոց աղջի թագ ու դահու:  
Յանկարծ սարափեց յուսահատ սրտով  
Գողդողալ սկսեց և բոլոր մարմինն  
Մի հրաժարական վերջին բարեով  
Աստուծոյ աշխարհից դարձաւ անկողին:  
Ցաւն աւելացաւ սակաւ առ սակաւ,  
Մինչ խեղճ կեռնին ուժաթափ արաւ:



Եւ նու աշխար հիս ցաւիցն ազատուած,  
Երկրաւոր կեանքից երկինք վոխվեցաւ,  
Ուր հանգստացաւ անմահից փառքով,  
Ցաւոս վիճակի անուն թողելով:  
Գնայ, ուր չ'կայ ոչ մի ցաւոց կազմ,  
Ո՛չ զէն, ոչ կոխ և ոչ պատերազմ,  
Ուր չ'կայ նեղութիւն, չ'կայ ցուրտ ու տօթ,  
Չ'կայ աղքատ, հարուստ, աւետիք կամ բօթ.  
Այլ միայն հանդիսաւ մշտնջենաւոր  
Անցաւ, անտրասում, խաղաղ փառաւոր:  
Նոյնպէս և հանդիսաւ մարմինն կեռնի  
Փառաւոր թաղման եղեւ արժանի,  
Եւ հցակապ շէնն կեղեստինեաց վան  
Կեռն վերջինին սուեց գերեզման:  
Անդ կայ մինչ այսօր նորա դամբարան  
Հային յիշելիք ցաւիտենական,  
Մինչ կ'գայ Յիւնիս—վարձահատոց յոյս,  
Իւր հաւատքի փառք կառնու անտարակոյս:

— 8 —

Tipografia Amb. Թուաճյանց և Կ. Ժ.



5-41

as

*very nice place*



ԳԻՆԵ է 30 ԿՈՊ.

